

ԱՆԻ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

## ՄԻ ԷԶ ՄԵԼՔԻՄԵԴԵԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՍԿԱՆ ԺԱՌՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ

Ազգային-հոգևոր պահպանողական ուղղության ներկայացուցիչներից Մելքիսեդեկ արքեպիսկոպոս Մուրադյանցի (1836-1903) աշխարհական տարիների գրական-հրապարակախոսական գործումնության մի կարևոր փուլն է Թիֆլիսի «Կոռումկ Հայոց աշխարհի» հանդեսին աշխատակցությունը, որի երեք հիմնադիրներից մեկն էր նա՝ Մարկոս Աղաբեկանի և Մատթեոս Մամուրյանի հետ միասին:

Հայ Եկեղեցին ու լուսավորությունը իրու անքակտելի միասնություն և ազգապահանման նախապայման դիտարկող մտավորականի որոնումների, մտորումների, ուսումնասիրության, քննության այն շրջանակն էր դա: Այս տարիներին Մուրադյանցը տպագրում է մի շարք հոդվածներ, որոնք հասուն գրչի արտահայտություն են և բացահայտում են Բեղիմակի հրապարակախոսական ունակությունները, ընթացիկ կյանքի խնդիրների խոր գիտակցումը, հայոց պատմության կենակիորդն ու փիլիստիվայությունը ժողովրդի առօրյա հոգսերի լուծմանը ծառայեցնելու ձեզտումն ու կարողությունը:

1862 թ. «Կոռումկ»-ի Գ համարում տպագրվում է Գ. Մուրադյանցի «Պարակների հիմն կորստաբեր խորհրդը մեր հայոց ազգի համար» հոդվածը, ուր Բեղիմակը նետազոտողի նուրբ գգացողությամբ վերլուծում է Եղիշեի պատմության մի դրվագը: Նա վարպետորեն վեր է հաճում ու ներկայացնում այն նեթատեքստը, որ հայոց հոգևոր ակնառու գործիչներից մեկը պահ էր տվել մատյաններին:

Վկայակոչելով Հին աշխարհի պատմությունը, հոդվածագիրը նկատում է, թե այն ազգերի գոյության ամեն մի պայքարի ժամանակաշրջան էր, երբ երեկվա հաջողակ «ազգակուլը կարող է վաղը ինքն ամենատանալ պատմության թատերաբնից». «Մի ազգ կործանելը, կամ մարդկութեան մեծ գերդաստանի մի ցեղը կլանելը և աշխարհին երեսից ամենատացմելը եղել է փառք և պարծանք միսի համար: ...Բայց ի՞նչ են եղել ազգակործանների աւերանաց գործիքները: Նոցա գործիքներն են եղել յայտնապես հուր, սուր, կոտորած, արինահեղութիւն, և աւերմունք, իսկ ծածկապէս քաղաքական խորամանն բարեկամութիւն, հնարք երկապակութեան և շանք աղքատացուցանելոյ»<sup>1</sup>: Այս, ցանկացած իրավիճակում ազգակործան առերևույթ գործուները հանդես են գալիս անտեսանելի, խորքային, ավելի ազդու միջոցների հետ, և այդ հանգամանքը ճիշտ է նկատել Բեղիմակը:

Բյուզանդիայի ազգեցությունը Անդրկովկասում թուլացնելու, անանցանելի անջրանտ առաջացմելու լավագույն միջոցը հավատափոխությունն էր: Հաշվարկը ճիշտ էր, հոգևոր պաշտամունքային մերձեցումը պիտի նեշտացներ մնացյալ գերխնդիրների արագ լուծումը: Վարդանանց ժամանակաշրջանը լավ ուսումնասիրած Դերեմիկ Դեմիրճյանը նկատում է. «Հազկերտին այս գործում խորհրդատու եղան մոգերը՝ պարսից կրոնավորները,

<sup>1</sup> Կոռումկ Հայոց Աշխարհի, 1862, թ. Գ, էջ 177 (այսումեն՝ ԿՀԱ):

որոնք մենց պատճեն հեղինակություն ունեին նրա մոտ, որ ինքը՝ Հազկերտն էլ միևնույն պատակին էր ձգուում»<sup>2</sup>:

Գարեգին Մուրադյանցը քննում է Եղիշեն պատմիչի մկարագրած այն շրջանը, երբ Հազկերտն իր հավատարիմ ծառաներից մեկին՝ Դեմշապութին, ուղարկում է Հայաստան: Նա կեղծ բարեկամական ու խաղաղասեր կեցվածքով աշխարհագիր է անցկացնում երկրում. «...ի թողութիւն հարկաց և ի թերեւութիւն ծանրութեան այրութիոյն»<sup>3</sup>: Սակայն, նրա բուն նպատակը շատ շուտով պարզ է դառնում: Եվ նրա հինգ գլխավոր ձեռնարկումներն ել, Մուրադյանցի բնորոշմամբ, «կորստաքեր խորհուրդներ» էին հայոց համար: Հողվածագիրը քննում է դրանք ըստ ներթականության:

«Առաջին, զազատութիւն Եկեղեցւոյն արկանէր ի ծառայութիւն», - գրում է պատմիչը<sup>4</sup>: Սա երկի ցամկացած այլ ազգի դեպքում այն կործանարար ազդեցությունը չէր ունենա, որքան հայի, քանզի գիտենք, որ հոգնոր կառուցմերը բացառիկ են ունեն մեր ժողովրդի ճակատագրում: «Ազատութիւն հայրենեաց, ազատութիւն թագաւորութեան, ազատութիւն ազգի այնչափ մեծ նշանակութիւն չունեին այս դարումս Հայոց համար, որչափ ազատութիւն Եկեղեցւոյ: Նոյն իսկ ազգի ուսերիմները մեր բովանդակ երկիրը աւերելուց յետոյ, թագաւորամիստ քաղաքները փոշիացմելուց յետոյ, տեսմելով, թէ Հայերին չեն կարողանում իրանց ցամկացած վնասը հասցնել, շանահեար էին լինում նորա ամենամեծ ազատութիւնը, նորա կրօնական ազատութիւնը նուաճել», - նկատում է Գ. Մուրադյանցը<sup>5</sup>:

Եկեղեցու ազատությունը դնել ծառայության տակ, նշանակում է վճառել ազգի կենացար արմատը, ոգին պահող բորբ կրակը փորձել հանգցնել: Մինչեռո, դա մեր ամենանուրը ու ամենաամուր գործունն է, թերևս ամենակարևոր կովանը, որն ազգանվեր հոգնոր գործիչների առկայության դեպքում պահապան վահան է եղել, բացակայության դեպքում՝ Աքիլլեյան գարշապար: Եվ միայն պարսկները չեն, որ կուահել ու փորձել են շարդել այդ ուժը: Հայ գաղթավայրերի աստմությունը ասվածի կենդանի վկան է նաև այսօր: Ու ճիշտ է նկատում հոդվածագիրը՝ ինքնարուխ մի պողովմամբ գրելով. «Ել հ՞նչ էին թողնում մեր ազգի համար պարսկները, երբոր Եկեղեցին ծառայութեան տակ էին գցում, թագաւորութիւն, պերճութիւն, հարստութիւն, զօրք և զօրականք - ո՞հ, սոքա վաղուց արդէն ստրկութեան և ծառայութեան մէջ էին: Կորցնել Եկեղեցու ազատութիւնը, նոյնն է, թէ կորցնել հոգու, մտքի ազատութիւն, և ազգին դատապարտել մահուան»<sup>6</sup>:

Երկրորդ ազգակործան «խորհուրդը». «...միայնակեաց քրիստոնեայք, որ բնակեալ էին ի վանորայս, ընդ նովին աշխարհագրով էարկ»<sup>7</sup>: Մուրադյանցը նկատում է, որ «միայնակեաց քրիստոնեա»-ները աշխարհիկ կյանքից հրաժարված, հեռավոր մենաստաններում ու վանքերում ապաստանած, քրիստոնեական կրթությանն ու գիտությանը նվիրված անձինք էին, ուստի ազատ պիտի լինեին հարկերից: Իսկ Հազկերտի հետին նպատակը մեկն

<sup>2</sup> Գ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 12, Երևան, 1985, էջ 304:

<sup>3</sup> Եղիշէ, Վասն Վարդաման և Հայոց պատերազմին, Երևան, 1989, 2-րդ լոդանակ, էջ 44:

<sup>4</sup> Անդ:

<sup>5</sup> ԿՀԱ, նույն տեղում, էջ 179:

<sup>6</sup> Անդ, էջ 180:

<sup>7</sup> Եղիշէ, Վասն..., էջ 44:

եր. «...Բիմնայատակ ամի մենաստանները, որոնք քրիստոնէական ճշմարտութեանց վառարաններն են. որ դիրին լինի նրա համար, տարածել մոգական ուսմունքը, և արմատացնել զրադաշտական դէմը, տիրելով միանգամայն հոգիների և մարմինների վերայ: ...Միշտ այսպիսի խորհրդաներ են լրանու չարասէր տիրապետները, եթի կամենում են մի ազգի գոյութիւնը ջնջել աշխարհին երեսից»<sup>8</sup>:

«Երրորդ, զիարկ աշխարհին առաւել ծանրացոյց», - շարունակում է թվարկել Եղիշեն պատմիչը<sup>9</sup>: Այսպիսով հայերը քայլ առ քայլ, թիզ առ թիզ զրկվում են իրենց իշխանությունից: Պատմիչի մշած այս մեկ սեղմ նախադասությունը, թէ հարկերն առավել ծանրացրեց, հասկանալ է տալիս, որ առանց այն էլ ծանր հարկերն արդեն անտանելի չափերի ու ծանրության հասան:

«Հարկը առաջ առնում էր շէն քաղաքներից, արդիւնաբեր աղբիրներից, երկրի տարեկան արդիւնքներից և հարուստ տեղերից: Բայց վերջումը հարկ է դրտմ նաև անապատ դաշտերի վերայ, աւերակների վերայ, երկրագործական գործիքների վերայ, գերանների վերայ, վառերու փայտի վերայ, այգեստանների ցանկապատների վերայ.... Հարկ առնել այն տեղից, ինչ տեղից արդիւնք չէ ստացում, հարկ առնել այն տեղից, ինչ տեղ հարկ տալու կարողութիւն չկայ, նշանակում է ժողովրդին պարտքի տակ ձգել, աղքատութեան մէջ հաշել և մաշել, ճնշել և հարստահարել»<sup>10</sup>:

Ի դեպ, Եղիշեն երեցն էլ է նկատում, թէ պարսիկները նույնական զարմանում են, թէ որ տեղից են հայերը կարողանում գտնել միջոցներն ու չեն սպառվում դրանք. «...ուստի» այս անմանակ գանձ ելամնէ՝ զիա՞՞դ շէն կայցէ աշխարհն»<sup>11</sup>:

Կիրաված չորրորդ միջոցը ևս ազդու է և արդիական բոլոր ժամանակներում. «...զնախարարեանն բանարկութեամբ արկ ընդ միմեանս, և յամենալն տան արար խոռվութիւն»<sup>12</sup>:

Այսպիսով կիրավում է դեռևս անտիկ աշխարհից հայտնի ու փորձված «բաժանիր, որ տիրեա» սկզբունքը: Սա նուրբ հարց է, և Գարեգին Մուրադյանցը շատ ճիշտ նկատում է՝ իշխում է այն թյուր կարծիքը, թէ Բայ ժողովուրդը անմիաբան է (այս թյուրը բոլումը պահպանվում է նաև այսօր): Բայց, առարկում է նա, անմիաբան են նաև մյուս ժողովուրդները, և վկան է համաշխարհային պատմությունը: Սակայն, ի տարբերություն նրանցից, հայերի մէջ ամբարտություն, երկարակություն, անմիաբանություն և երմաններ են միշտ օտարները: Այսինքն՝ ոչ թէ ազգային հատկանիշ է դա, այլ դրանց թեկադրված վարքագիծ:

Հայոց պատմությանը քաջատեղյակ յուրաքանչյուր ոք կարող է դա ապացուցել, համոզված է հոդվածագիրն ու համապատասխան փաստարկներ է թերում: Հեղինակի համոզմամբ, հայոց միաբանության ամենախոսուն վկան Սփյուռքն է, աշխարհասկիյուն հայն ամենուր իր ազգային դիմագիծը պահում է Բենց միաբանության շնորհիվ: Եվ այս տեսակետից հծվար է համաշխարհային պատմության մէջ համեմատության մեկ այլ օրինակ

<sup>8</sup> ԿՀԱ, նույն տեղում, էջ 182:

<sup>9</sup> Եղիշե, Վասն..., էջ 44:

<sup>10</sup> ԿՀԱ, էջ 183:

<sup>11</sup> Եղիշե, Վասն..., էջ 46:

<sup>12</sup> Անդ:

գտնել: Խակ Հազկերտը անբարշտություն սերմանելու բոլոր միջոցները գիտեր: Նրա սատրապները մեկի տոհմային կալվածքները վերցնում, տալիս էին մյուսին, մեկին իշխանությունը տրվում էր ի հաշիվ մյուսի: Եվ ինչու միայն Հազկերտը:

Բայց, ըստ Եղիշեի, վատթարը հինգերորդ միջոցն էր. «Եւ ես չարագոյն հինգերորդն. քանզի որ հազարապետն էր աշխարհին, իբրև զհայր վերակացու համարեալ էր աշխարհականաց քրիստոնէից, գրգռեաց յարոյց զամբաստանութիւն ի վերայ նորա, և հանեալ զնա ի գործոյն՝ փոխանակ նորա Պարսիկ ած յաշխարհն, և մես մոգպետ՝ դատաւոր աշխարհին, զի զԵկեղեցւոյն փառան աղաւաղեսցեն»<sup>13</sup>:

Մոգերը, մոգպետները ամենամոլեռանդ ու Աննագ հակառակորդներն էին քրիստոնեության և Արանք կարգվում էին «դատաւոր աշխարհին», հայրուր հազարներով ցրվում էին երկրի բոլոր կողմերը, միջոցների մեջ խորություն չդնելով՝ աղճատում, ջլատում էին ժողովրդի ամրակուու ոգին: Հատկապես այս ուժի հետ էր մեծ հույսեր կապում Հազկերտը: Հակառակ դրան հայ, հոգևորակամները զրկվում էին իրենց հոտի հետ շիվելու, քարոզելու, ազգային սովորություններն ու ծիսակարգը ուսուցանելու հնարավորությունից:

«Ազգ կործանելու գլխաւոր հիմքերն են, - ազգային սովորությունները փոխել, եկեղեցական կարգերը խաճարել, հայրենի ուսումը և լեզուն արգելել, թէ աղջիկ, թէ տղայ օտար ուսումով կրթել, ընտանեկան սրբութիւնը, որ ազգայնութեան կենդրոն է, ապակամել.... Ինչ ազգ կ'ընկնի այս որոգայթների մէջ, ի հարկէ կամաց կամաց կորչի նորա ազգութիւնը», - եզրակացնում է հոդվածագիրը<sup>14</sup>:

«Պարսիկների հինգ կորստաքեր խորհուրդը մեր հայոց ազգի համար» հոդվածը «կոումկ Հայոց աշխարհի» ամսօրյալում Մելքիսեդէկ արքեպիսկոպոս (աշխարհական անվամբ՝ Գարեգին) Մոլայանցի տպագրած լավագույն հոդվածներից է ամեկանած, ուր ակնհայտ են ազգային գործի, ճշմարիտ մտավորականի, Աերիուն ուսումնասիրողի բոլոր շնորհները, ինչն էլ հետաքրքիր է դարձնում մատուցվող նյութը, որը ծրագրային է իր տեսակի ու ձևի մեջ:

<sup>13</sup> Եղիշէ, Վասն..., էջ 46:

<sup>14</sup> ԿՀԱ, էջ 190: